ՏԵՂԵԿԱՆՔ
«ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ, «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի նոյեմբերի 20-ին

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 25. Պետական գույքի նվիրատվությունը կամ նվիրաբերությունը

1. Պետական գույքի նվիրատվությունը կամ նվիրաբերությունը պետք է լինի նպատակային, արդյունավետ և լուծի որոշակի տնտեսական կամ սոցիալական խնդիրներ:

2. Պետական գույքի նվիրատվության կամ նվիրաբերության կողմ կարող են հանդես գալ իրավաբանական անձինք, համայնքները, օտարերկրյա պետությունները, քաղաքացիները և օտարերկրյա անձինք:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված նվիրատվության կամ նվիրաբերության սուբյեկտներ հանդիսացող քաղաքացիների խմբերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

4. Պետական գույքի նվիրատվության կամ նվիրաբերության պայմանագիրը կնքում է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պետական կառավարման մարմինը:

Հոդված 25.1. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինումը

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետությանը հանձնված գույքը կարող է տնօրինվել հետևյալ եղանակներով.

1) այն նվեր ստացած հանրային պաշտոն զբաղեցնող անձի կամ հանրային ծառայողի օգտագործմանը թողնելով՝ որոշակի ժամկետով, սակայն ոչ ավել, քան մինչև վերջինիս պաշտոնից ազատվելը կամ ծառայությունը դադարեցնելը, կամ համապատասխան պետական մարմնի օգտագործմանը հանձնելով.

2) մշակութային արժեք համարվող գույքը՝ մարդկային հասարակության կենսագործունեության արգասիք համարվող առարկաները և ստեղծագործությունները, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական, պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն, ինչպես նաև գրավոր հուշարձանները, պետական կամ համայնքային թանգարաններին հանձնելով կամ ազգային գրադարանային հավաքածուում ընդգրկելով.

3) շուտ փչացող գույքը, կենդանիները, պահպանման էական ծախսեր պահանջող գույքն անհապաղ իրացնելով, իսկ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում՝ ոչնչացնելով (շուտ փչացող գույքի դեպքում) կամ Կառավարության որոշմամբ սահմանված այլ եղանակով տնօրինելով.

4) այն սույն օրենքով սահմանված կարգով հրապարակային սակարկություններով իրացնելով.

5) գույքը սույն օրենքով սահմանված կարգով նվիրաբերելով:

2. «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի հիման վրա Հայաստանի Հանրապետությանը հանձնված գույքն ամրացվում է Կոմիտեին և տնօրինվում վերջինիս կողմից՝ բացառությամբ «Պետական արարողակարգի մասին» օրենքով նախատեսված դեպքերում հիմք ընդունելով Պետական արարողակարգի ծառայության եզրակացությունը:

3. «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականություն դարձած գույքն իրացվում է հրապարակային սակարկություններով կամ այն սույն օրենքով սահմանված կարգով նվիրաբերելով: Պահպանման էական ծախսեր պահանջող գույքը և կենդանիներն իրացվում են անհապաղ, իսկ շուտ փչացող գույքն իրացվում է անհապաղ կամ ոչնչացվում՝ Կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և կարգով:

4. Հանրային պաշտոն զբաղեցնող անձանց և հանրային ծառայողների՝ պետական սեփականություն դարձած նվերների տնօրինման կարգը, շուտ փչացող և պահպանման էական ծախսեր պահանջող գույքերի ցանկը, շուտ փչացող գույքի ոչնչացման դեպքերը, կարգը և տնօրինման եղանակները, առանձին տեսակի գույքի տնօրինման առանձնահատկությունները, գույքի տնօրինման՝ սույն հոդվածի 1-ին մասում նշված եղանակների ընտրության մեթոդաբանությունը և տնօրինման եղանակի վերաբերյալ «Պետական արարողակարգի մասին» օրենքով սահմանված եզրակացության տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածի 6-րդ և 9-րդ մասերի հիման վրա Հայաստանի Հանրապետության սեփականությունը դարձած թանկարժեք մետաղներից և թանկարժեք քարերից պատրաստված նվերները տնօրինվում են «Թանկարժեք մետաղների մասին» օրենքով սահմանված կարգով:

Հոդված 26. Պետական գույքի մասնավորեցումը

1. Պետական գույքի մասնավորեցումն իրականացվում է «Պետական գույքի մասնավորեցման (սեփականաշնորհման) մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ պետական գույքի մասնավորեցման ծրագրերին և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած կարգերին համապատասխան:

Հոդված 27. Պետական գույքի օտարումից ստացված միջոցների տնօրինումը

~~1. Պետական գույքի օտարումից ստացված դրամական միջոցները, օտարման գործարքների հետ կապված ծախսերը, որոնց գումարը չի կարող գերազանցել գույքի վաճառքի գինը (պահպանություն և այլն) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով փոխհատուցելուց հետո ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և համապատասխան համայնքների բյուջեներ՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային~~

~~համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համամասնություններով, եթե այդ ծախսերի համար միջոցներ նախատեսված չեն համապատասխան բյուջեներում:~~

1. Պետական գույքի օտարումից ստացված դրամական միջոցները, օտարման գործարքների հետ կապված ծախսերը (պահպանություն և այլն), որոնց գումարը չի կարող գերազանցել գույքի վաճառքի գինը, Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով փոխհատուցելուց հետո ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե և համապատասխան համայնքների բյուջեներ՝ «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համամասնություններով, եթե այդ ծախսերի համար միջոցներ նախատեսված չեն համապատասխան բյուջեներում: